

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է պատասխանատու և գնահատող հանձնաժողովի
2020 թվականի փետրվարի 10-ի N 1 որոշմամբ

Ընթացակարգի ծածկագիրը՝ ՄՎԻ-ԱՊՁԲ-20/01

Պատվիրատուն՝ «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲԸ, որը գտնվում է ք. Երևան, Էզրաս
Հասարակության փող., 9 շենք_հասցեում, գնումների կատարման նպատակով հայտարարում է ընթացակարգ
(այսուհետ՝ ընթացակարգ), որն իրականացվում է մեկ փուլով:

Ընթացակարգի արդյունքում հաղթող մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել դեղորայքի
մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն
չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի սույն ընթացակարգին մասնակցելու հավասար իրավունք:

Ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեցող անձանց, ինչպես նաև մասնակիցներին ներկայացվող
որակավորման չափանիշներն ու այդ չափանիշների գնահատման համար ներկայացվելիք փաստաթղթերը
սահմանված են սույն ընթացակարգի հրավերով:

Հաղթող մասնակիցը որոշվում է հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտեր ներկայացրած
մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու
սկզբունքով:

Ընթացակարգի հրավերը թղթային ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին, մինչև սույն
հայտարարության հրապարակման օրվանից հաշված՝ 7-րդ օրը ժամը 15:00-ը: Ընդ որում, թղթային ձևով հրավեր
ստանալու համար պատվիրատուին պետք է ներկայացնել գրավոր դիմում: Պատվիրատուն ապահովում է
թղթային ձևով հրավերի տրամադրումն անվճար:

Էլեկտրոնային ձևով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում պատվիրատուն անվճար ապահովում է
հրավերի՝ էլեկտրոնային ձևով տրամադրումը դիմումը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա
ընթացքում:

Հրավեր չստանալը չի սահմանափակում մասնակցի՝ սույն ընթացակարգին մասնակցելու իրավունքը:

Ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Էզրաս Հասարակության փող., 9 շենք
հասցեով, փաստաթղթային ձևով մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 7-րդ օրվա
ժամը 15:00-ը: Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

Հայտերի բացումը տեղի կունենա ք. Երևան, Էզրաս Հասարակության փող., 9 շենք հասցեում, **2020 թվականի
փետրվարի 18-ին ժամը 15:00-ին:**

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել
պատասխանատու և գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Վ. Դանիելյանին-ին

Հեռախոս 094-74-67-50

Էլ. փոստ daniel1978@list.ru

Պատվիրատու «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲԸ

Հաստատված է
ՄՎԻ-ԱՊՁԲ-20/01 ծածկագրով
ընթացակարգի պատասխանատու և գնահատող հանձնաժողովի
2020 թ. փետրվարի 10-ի N 1 որոշմամբ

«ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ

Հ Ր Ա Վ Ե Ր

«ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝
ԴԵՂՈՐԱՅՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ

Հարգելի մասնակից նախքան հայտ կազմելը և ներկայացնելը խնդրում ենք մանրամասնորեն ուսումնասիրել սույն հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ԴԵՂՈՐԱՅՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ

ՄԱՍ I.

1. Գնման առարկայի բնութագիրը
2. Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը
3. Հրավերի պարզաբանումը և հրավերում փոփոխություն կատարելու կարգը
4. Հայտը ներկայացնելու կարգը
5. Հայտի գնային առաջարկը
6. Հայտի գործողության ժամկետը, հայտերում փոփոխություն կատարելու և դրանք հետ վերցնելու կարգը
7. Հայտերի բացումը, գնահատումը և արդյունքների ամփոփումը
8. Պայմանագրի կնքումը
9. Պայմանագրի ապահովումը
10. Ընթացակարգը չկայացած հայտարարելը
11. Գնման գործընթացի հետ կապված գործողությունները և (կամ) ընդունված որոշումները բողոքարկելու մասնակցի իրավունքը և կարգը

ՄԱՍ II. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳ

1. Ընդհանուր դրույթներ
2. Ընթացակարգի հայտը
3. Հայտը պատրաստելու կարգը
4. Հավելվածներ 1-8

Սույն հրավերը տրամադրվում է ի լրումն ՄՎԻ-ԱՊՁԲ-20/01 ծածկագրով անցկացվող գնման ընթացակարգի (այսուհետև՝ ընթացակարգ) հայտարարության:

Սույն հրավերը կազմվել է «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲ ընկերության տնօրենների խորհուրդի որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ), պահանջներին համապատասխան և նպատակ ունի «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲԸ-ի (այսուհետև՝ պատվիրատու) կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետև՝ մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, հաղթող մասնակցին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Հայտեր կարող են ներկայացնել բոլոր անձիք, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Սույն ընթացակարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն ընթացակարգի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

Պատասխանատու և գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ daniel1978@list.ru

ՄԱՍ I

1. ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1.1 Գնման առարկա է հանդիսանում «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲԸ կարիքների համար՝ դեղորայքի ձեռքբերումը (այսուհետ՝ նաև ապրանք), որոնք խմբավորված են 139 չափաբաժիններում՝

<i>Չափաբաժինների համարները</i>	<i>Չափաբաժնի անվանումը</i>
1	Ադենտոնին /400մգ+5մլ/, Հեպտրալ
2	Ամբոքսոլ 30մգ
3	Ամինոկապրոնաթթու 5% 250մլ
4	Ամինոֆիլին 24մգ/մլ, 5մլ, Էուֆիլին
5	Ամիոդարոն 200մգ
6	Ամիոդարոն 50մգ/մլ, 3մլ
7	Ամլոդիպին 10մգ
8	Ամօքսիցիլին 500մգ
9	Ասկորբինաթթու 50մգ/մլ, 5մլ
10	Ատորվաստատին 40մգ, Ատորիս
11	Ատրոպին 1մգ/մլ, 1մլ, Ատրոպինի Սուլֆատ
12	Արտիկային 4% 1.8մլ
13	Ացետիլցիստեին 200մգ
14	Բենդազոլ 10մգ/մլ 1մլ N10
15	Բիսակոդիլ 10մգ
16	Բիսպրոլոլ 5մգ
17	Բուպրոպրիոն 5մգ/մլ, 10մլ, Բուպրոպրիոնի հիդրոքլորիդ 0,5% 10մլ
18	Բուպրոպրիոն 5մգ/մլ, 4մլ, Բուպրոպրիոնի Հեմի
19	Բրոմհեքսին 8մգ
20	Գլիկլազիդ 60մգ
21	Դեքսամեթազոն 4մգ/մլ, 1մլ
22	Դեքստրոզ 400մգ/մլ, 5մլ
23	Դեքստրոզ 50մգ/մլ, 3000մլ
24	Դեքստրոզ 50մգ/մլ, 500մլ (1 էլքով)
25	Դիազեպամ 5մգ
26	Դիազեպամ 5մգ/մլ, 2մլ
27	Դիգօքսին 0,25մգ
28	Դիգօքսին 0,25մգ/մլ 1մլ
29	Դիլյոֆենակ 25մգ/մլ, 3մլ
30	Դիլյոֆենակ 50մգ
31	Դիլյոֆենակ մոմիկ 100մգ
32	Դիֆենհիդրամին 10մգ/մլ, 1մլ, Դիմեդրոլ
33	Դոբուտամին 250մգ
34	Դոպամին 200մգ/5մլ, 5մլ
35	Դրոտավերին 20մգ/մլ, 2մլ
36	Էթանոլ 70% 1000մլ
37	Էթանոլ 96% 1000մլ
38	Էնալապրիլ 10մգ
39	Էնօքսապարին 40մգ/0,4մլ, 0,4մլ, Կլեքսեպար 0,4
40	Էպինեֆրին 1,82մգ/մլ, 1մլ
41	Էտամզիլատ 125մգ/մլ, 2մլ, Դիցինոն
42	Թիամին 50մգ/մլ, 1մլ, Թիամին քլորիդ 50մգ/մլ, 1մլ
43	Թորած ջուր 3000մլ
44	Իզոսորբիդի մոնոնիտրատ 60մգ, Սոնոսորբ Իքսել Է/Ճ դեղահաբեր
45	Իզոֆլուրան 250մլ
46	Լակտուլոզ 1000մլ
47	Լևոբուպրոպրիոնի հիդրոքլորիդ 5մգ/մլ 10մլ, Կիրոկային

48	Լևոթիրոքսին 100մկգ
49	Լիդոկային 10% 2մլ N10
50	Լիդոկային + Էպինեֆրին 2% 20մլ
51	Լիդոկային 20մգ/մլ, 20մլ, Լիդոկային-Լիկվո
52	Լիդոկային 20մգ/մլ, 2մլ, Լիդոկային
53	Լիդոկային, Էպինեֆրին 20մգ/մլ+0,01մգ/մլ, 20մլ, Լիդոկային-Լիկվո Էպինեֆրինով
54	Լիդոկայինի քսուք 5% 15գր
55	Կալիումի քլորիդ 40մգ/մլ, 200մլ
56	Կալցիումի քլորիդ 100մգ/մլ, 5մլ
57	Կապտոպրիլ 25մգ
58	Կարդիոմագնիլ ռ/հ 75մգ N100
59	Կարճատև ազդեցության ինսուլին մարդու 100ՄՄ/մլ, 3մլ, Հումուլին Ռ
60	Կարվեդիլոլ 12.5մգ
61	Կարվեդիլոլ 6.25մգ
62	Կետամին 500մգ/10մլ, 10մլ, Կալիպսոլ
63	Կետորոլակ 30մգ/մլ, 1մլ
64	Կլարիթրոմիցին 500մգ
65	Կլեմաստին 1մգ/մլ, 2մլ, Կլեմաստին
66	Կլոպիդոգրեյլ 75մգ
67	Կոլխիցին 1մգ
68	Հեպարին (հեպարին նատրիում) 5000ՄՄ/մլ, 5մլ
69	Հեպարին քսուք 25գր
70	Մագնեզիումի սուլֆատ 250մգ/մլ, 5մլ
71	Մեթիլպրեդնիզոլոն 1000մգ
72	Մեթիլպրեդնիզոլոն 250մգ
73	Մեթիլպրեդնիզոլոն 4մգ
74	Մեկոլ քսուք 40,0 Բոր.
75	Մենադիոն 10մգ/մլ, 1մլ, Վիկասոլ
76	Մետամիզոլ 500մգ/մլ, 2մլ, Անալգին
77	Մետոկլոպրամիդ 5մգ/մլ, 2մլ
78	Մետրոնիդազոլ 500մգ
79	Մետրոնիդազոլ 5մգ/մլ, 100մլ
80	Մետֆորմին 500մգ
81	Միդազոլամ 5մգ/մլ, 3մլ
82	Միջին ազդեցության ինսուլին մարդու 100ՄՄ/մլ, 3մլ, Հումուլին Ն
83	Մորֆինի հ/ք 1% 1մլ
84	Մօքսիֆլօքսացին 1,6մգ/մլ, 250մլ
85	Յոհեքսոլ 100մլ, Օմնիպակ 350
86	Յոպրոմիդ 769մգ/մլ, 100մլ, Ուլտրավիատ 370
87	Նադրոպարինի կալցիում 2850ՄՄ 0,3մլ
88	Նատրիումի բիկարբոնատ 84մգ/մլ, 20մլ
89	Նատրիումի թիոսուլֆատ 300մգ/մլ, 5մլ, Նատրիումի թիոսուլֆատ
90	Նատրիումի քլորիդ 100մգ/մլ, 50մլ
91	Նատրիումի քլորիդ 9մգ/մլ, 1000մլ
92	Նատրիումի քլորիդ 9մգ/մլ, 100մլ
93	Նատրիումի քլորիդ 9մգ/մլ, 250մլ
94	Նատրիումի քլորիդ 9մգ/մլ, 3000մլ
95	Նատրիումի քլորիդ 9մգ/մլ, 500մլ /2 էլքանի/
96	Նատրիումի քլորիդ 9մգ/մլ, 500մլ /1 էլքանի/
97	Նատրիումի քլորիդ, կալիումի քլորիդ, կալցիումի քլորիդ 500մլ /1 էլքանի/, Ռինգեր
98	Նեոստիգմին 0,5մգ/մլ, 1մլ, Պրոզերին
99	Նիկեթամիդ 250մգ/մլ, 2մլ, Կորդիամին
100	Նիտրոգլիցերին 5մգ/1մլ 2մլ
101	Նոքսիլօքսացին 400 մգ
102	Ուրասայիլ 5մգ/մլ, 10մլ, Տախիբեն
103	Պանանգին 10մլ

104	Պանկրեատին /10000Մ+7200Մ+ 400Մ/, Պանգինոբոլ
105	Պանկրեատին 150մգ, Կրեոն 10000
106	Պապավերին 20մգ/մլ, 2մլ
107	Պարացետամոլ 1%, 100մլ
108	Պիպեկուրոնիոմի բրոմիդ /4մգ+2մլ/, Արդուան
109	Պիրացետամ 200մգ/մլ, 5մլ, Պիրացետամ
110	Պովիդոն յոդ 100մգ/մլ, 1000մլ
111	Պովիդոն յոդ քսուք 10% 20գր
112	Պրոկային 5մգ/մլ, 250մլ, Նովոկային 5մգ/մլ, 250մլ
113	Պրոպոֆոլ 10մգ/մլ, 20մլ
114	Պրոպրանոլոլ 40մգ
115	Սալբուտամոլ 100մկգ/դեղաչափ, 200 դեղաչափ, Սալբուտամոլ
116	Սևֆուրան 100%, 250մլ
117	Սուլֆասալազին 500մգ
118	Սուքսամեթոնիոմ 20մգ/մլ, 5մլ, Դիթիլին-Դարնիցա
119	Սպազմատոն
120	Սպազմատոն 5մլ
121	Սպիրոնոլակտոն 25մգ
122	Վարֆարին 2.5մգ
123	Վերապամիլի հիդրոքլորիդ 2.5մգ/մլ 2մլ
124	Տրամադոլի հիդրոքլորիդ 50մգ/մլ, 2մլ
125	Տրանեքսամաթթու 50մգ/մլ, 5մլ
126	Ցեֆտրիաքսոն 1000մգ
127	Ցիանկոբալամին 0.5մգ/մլ, 1մլ
128	Ցիպրոֆլոքսացին 500մգ, Ցիպրոֆլոքսացին
129	Ցիպրոֆլոքսացին 2մգ/մլ, 200մլ, Ցիպրոֆլոքսացին
130	Ցիսատրակուրիոմ 2մգ/մլ, 2,5մլ,
131	Քլորոպիրամին 20մգ/մլ, 1մլ, Սուպրաստին
132	Օմեպրազոլ 20մգ, Օմեպրազոլ
133	Ֆամոտիդին /20մգ+5մլ/, Քվամատել
134	Ֆամոտիդին 20մգ
135	Ֆամոտիդին 40մգ
136	Ֆենիլէֆրին 10մգ/մլ, 1մլ, Մեզատոն
137	Ֆլուկոնազոլ 150մգ
138	Ֆուրոսեմիդ 10մգ/մլ, 2մլ
139	Ֆուրոսեմիդ 40մգ, Ֆուրոսեմիդ

Ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են կնքվելիք պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 5 հավելվածում:

2. ՄԱՍՆԱԿՑԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱԳԸ

Մասնակիցների՝ «Մասնակցության իրավունքը» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

2.1 եթե մասնակիցը հայտով ներկայացրել է իր տվյալների համապատասխանության մասին գրավոր հայտարարություն, ապա տվյալ մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման գործընթացին:

Մասնակիցների՝ «Տեխնիկական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

2.2 եթե հրավերով «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի մասով սահմանված են համապատասխան պահանջներ, ապա մասնակիցը որպես սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին:

2) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

2.3 Մասնակիցների՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր:

2) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

2.4 Մասնակիցների՝ «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) եթե հրավերով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով սահմանված են համապատասխան պահանջներ, ապա՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

2) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

2.5 Մասնակցին իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր ներկայացնելու պահանջ:

2.6 Պատասխանատու և գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա Գնորդը իրավունք ունի մերժել տվյալ մասնակցի հայտը:

3. ՀԱՅՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Սույն ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը հանձնաժողովին ներկայացնում է հայտ: Հայտը սույն հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

Մասնակիցը կարող է հայտ ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի, այնպես էլ մի քանի կամ բոլոր չափաբաժինների համար:

Հայտը ներկայացվում է մինչև դրա համար սույն հրավերով սահմանված ժամկետի ավարտը:

Հայտի պատրաստման կարգը նկարագրված է սույն հրավերի 2-րդ մասում՝ ընթացակարգի հայտերը պատրաստելու հրահանգում:

3.2 Ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել հանձնաժողովին ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակվելու օրվանից հաշված «7»րդ օրվա ժամը «15:00»-ն, ք. Երևան, Էզրաս Հասրայան փող., 9 շենք հասցեով:

Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Վ. Դանիելյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ դրանց ստացման հերթականության՝ գրանցամատյանում նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Մասնակցի պահանջով դրա մասին տրվում է տեղեկանք: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը գրանցամատյանում չեն գրանցվում և դրանք՝ քարտուղարի կողմից վերադարձվում են:

3.3 Մասնակիցը հայտով ներկայացնում է՝

ա. գնման գործընթացին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը,

բ. մասնակցության իրավունքը և որակավորումը հիմնավորող փաստաթղթերը,

գ. գնային առաջարկ,

դ. հրավերով նախատեսված լիցենզիայի պատճենը,

ե. ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր), և հրավերով նախատեսված դեպքերում պահանջվող ծառայությունների կամ աշխատանքների տեխնիկական բնութագրերը,

զ. հայտարարություն՝ գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին,

է. հայտարարություն՝ տվյալ գնման գործընթացում իրեն, սույն կարգով սահմանված փոխկապակցված անձանց միաժամանակյա մասնակցության բացակայության մասին.

ը) գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե կնքվելիք պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով:

թ) համատեղ գործունեության պայմանագրի պատճենը, եթե մասնակիցները սույն ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

5. ՀԱՅՏԻ ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՆԸ

5.1 Առաջարկվող գինը ապրանքի արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

5.2 մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման ներառմամբ: Հանձնաժողովը իրավունք ունի մերժի մասնակցի գնային առաջարկը եթե գնային առաջարկի ընդհանուր գնի սյունակը լրացված է միայն թվերով:

Մասնակիցները գնային առաջարկը ներկայացնում են հրավերով սահմանված գնման առարկայի ամբողջ խմբաքանակի համար, իսկ գնման առարկաները փաստացի կմատակարարվեն՝ ըստ Գնորդի կողմից ներկայացվող պահանջի, ընդ որում եթե պայմանագրի գործողության ժամանակահատվածում Գնորդի կողմից ներկայացվել է պահանջ ոչ ամբողջ խմբաքանակի համար, ապա պայմանագիրը մնացորդային՝ չպահանջվող մասով լուծվում է:

5.3 Եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է, ապա գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով: Ընդ որում մասնակցից չի կարող պահանջվել, որ նա ներկայացնի գնային առաջարկի հիմնավորումներ կամ որևէ այլ տիպի տեղեկություններ կամ փաստաթղթեր, ինչպես նաև մասնակցի շահույթի չափը չի կարող հրավերով սահմանափակվել:

6. ՀԱՅՏԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՀԱՅՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿՍՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՔ ՇԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

6.1 Ընթացակարգի հայտը վավեր է մինչև Կարգին համապատասխան պայմանագրի կնքումը, մասնակցի կողմից հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

6.2 Մասնակիցը, մինչև սույն հրավերի 1-ին մասի 4.2 կետում նշված՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը, կարող է փոփոխել կամ հետ վերցնել իր հայտը:

7. ՀԱՅՏԵՐԻ ԲԱՅՈՒՄԸ, ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԱՐԳՑՈՒՆՔՆԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄԸ

7.1 Հայտերի բացումը կկատարվի հանձնաժողովի բացման նիստում՝ **2020 թվականի փետրվարի 18-ին ժամը «15:00»-ն, ք. Երևան, Էզրաս Հասարայան փող., 9 շենք հասցեում:**

Հայտերի բացման նիստում՝

նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված: Հանձնաժողովի քարտուղարը կամ համակարգողը հաղորդում է տեղեկատվություն գրանցամատյանում կատարված գրառումների մասին և հանձնաժողովի նախագահին է փոխանցում հայտերի գրանցամատյանը, դրա անբաժանելի մասը հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտերը.

2) հանձնաժողովը գնահատում է՝

ա. Հայտերը կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին և բացում համապատասխանող գնահատված հայտերը,

բ. բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին.

3) հանձնաժողովի նախագահը հայտարարում է հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը.

4) հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին, ըստ ներկայացված նվազագույն գնային առաջարկի: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների

ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ գործընթացի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը՝

ա. առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու և գնահատող հանձնաժողովի քարտուղարը կամ համակարգողը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

դ. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ մասնակիցների ներկայացրած գների, որոնց գինը չի գերազանցում այդ գնումը կատարելու համար գնման հայտով սահմանված գինը, որոշվում ու հայտարարվում են առաջին և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են տվյալ գործընթացի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների համար գնման հայտով սահմանված գինը, կամ նվազագույն գները հավասար են, գնման գործընթացն հայտարարվում է չկայացած:

7.2 Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը, ապա հանձնաժողովը կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը կամ համակարգողը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

7.3 Եթե սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

7.4 Հայտերի գնահատման նիստում հանձնաժողովը գնահատում է ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

7.5 Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը կամ համակարգողը էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

7.6 Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է հաղթող մասնակից:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և գնահատվում են հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցի փաստաթղթերը:

8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

8.1 Պայմանագիր կնքվում է հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից: Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

8.2 Հաղթող մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ընդ որում պայմանագրում ներառվում է հաղթող մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

8.4 Հաղթող մասնակցի կողմից պայմանագիրը չկնքվելու (հրաժարվելու) կամ պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու դեպքում հանձնաժողովն հաղթող մասնակցի որոշման նպատակով կիրառում է սույն կարգի 7.2-7.6-րդ կետերով նախատեսված պայմանները:

Ընդ որում հաղթող մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր:

8.5 Կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ հաղթող մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

9.1 Պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում, հաղթող մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Հաղթող մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

9.2 Պայմանագրի ապահովման չափը կազմում է պայմանագրի գնի 10 տոկոսը: Պայմանագրի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով: Պայմանագրի ապահովումը միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի, ձևով ներկայացվելու դեպքում, այն ներկայացվում է հավելված N 8-ով սահմանված ձևին համապատասխան:

9.3 Պայմանագրով պատվիրատուի կողմից կանխավճար հատկացվելու պայման նախատեսվելու դեպքում հաղթող մասնակիցը պատվիրատուին է ներկայացնում նաև կանխավճարի ապահովում՝ կանխավճարի չափով, բանկային երաշխիքի ձևով: Ընդ որում՝ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնման գործարքների դեպքում կանխավճարի ապահովումը հիմնավորող փաստաթղթում որպես բենեֆիցիար նշվում է

9.4 Եթե չափաբաժիններով կազմակերպված գնման ընթացակարգի շրջանակում՝

1) մասնակիցը հաղթող է ճանաչվում մեկից ավել չափաբաժինների մասով, ապա կարող է ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի համար առանձին, այնպես էլ մեկ պայմանագրի ապահովում՝ բոլոր չափաբաժինների համար: Մեկ պայմանագրի ապահովում ներկայացվելու դեպքում, դրա գումարը հաշվարկվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ:

2) կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով որևէ չափաբաժնի մասով լուծվում է, ապա պայմանագրի ապահովումը վճարվում է միայն այդ չափաբաժնի նկատմամբ հաշվարկված գումարի չափով:

10. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ

10.1 Կարգի համաձայն՝ հանձնաժողովը սույն ընթացակարգը չկայացած է հայտարարում, եթե՝

- 1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.
- 2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը:
- 3) ոչ մի հայտ չի ներկայացվել.
- 4) պայմանագիր չի կնքվում:

Եթե գնման գործընթացի արդյունքում պայմանագիր չի կնքվում, ապա այդ գործընթացը չկայացած է հայտարարվում, և կազմակերպվում է գնման նոր գործընթաց:

10.2 Բաժնետեր հանդիսացող փոխատուի միջոցների (փոխառության) հաշվին պարտավորություններ առաջացնող գնումների դեպքում, գնման ընթացակարգի արդյունքում պայմանագրի կնքման պայման է հանդիսանում գնման ընթացակարգի վերաբերյալ փոխատուի կողմից դրական եզրակացության առկայության հանգամանքը, բացառությամբ սույն կարգի 18-րդ կետով սահմանված դեպքերի: Գնման ընթացակարգի վերաբերյալ բաժնետեր հանդիսացող փոխատուի կողմից բացասական եզրակացության տրամադրման դեպքում պայմանագիր չի կնքվում, և գնման գործընթացը հայտարարվում է չկայացած:

ՄԱՍ II

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Ը Ն Թ Ա Ց Ա Կ Ա Ր Գ Ի Հ Ա Յ Տ Ը Պ Ա Տ Ր Ա Ս Տ Ե Լ ՈՒ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

1.1 Սույն հրահանգը նպատակ ունի օժանդակել մասնակիցներին հայտը պատրաստելիս:

1.2 Նպատակահարմարության դեպքում մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող՝ այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները:

1.3 Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԸ

Ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը սույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով սահմանված կարգով ներկայացնում է հայտ: Հայտին կցվում են սույն հրավերով նախատեսված համապատասխան փաստաթղթերը (տեղեկությունները):

Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝

ա. գնման գործընթացին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը՝ համաձայն հավելված N 1-ի.

բ. մասնակցության իրավունքը և որակավորումը հիմնավորող փաստաթղթերը, համաձայն հավելված N 3-ի

գ. գնային առաջարկ, համաձայն հավելված N 4-ի

դ. հրավերով նախատեսված լիցենզիայի պատճենը,

ե. ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, համաձայն հավելված N 3.1-ի.

զ. հայտարարություն՝ գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին՝ համաձայն հավելված N 2-ի

է. հայտարարություն՝ տվյալ գնման գործընթացում իրեն, սույն կարգով սահմանված փոխկապակցված անձանց միաժամանակյա մասնակցության բացակայության մասին.՝ համաձայն հավելված N 2.-ի

մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման ներառմամբ: Հանձնաժողովը իրավունք ունի մերժի մասնակցի գնային առաջարկը եթե գնային առաջարկի ընդհանուր գնի սյունակը լրացված է միայն թվերով:

3. ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Մասնակիցը հայտը ներկայացնում է սույն հրավերով սահմանված կարգով:

Մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձում է այն ներկայացնողը: Ծրարում ներառված փաստաթղթերը, կազմվում են բնօրինակից /բացառությամբ 3-րդ կողմի կողմից տրամադրված կամ հաստատված փաստաթղթերի, որոնց դեպքում ներկայացվում է դրանց՝ բնօրինակից պատճենահանված տարբերակը/ և 2 օրինակ պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Հայտում ներառվող բնօրինակ փաստաթղթերի փոխարեն կարող են ներկայացվել դրանց նույնպիսի կարգով վավերացված օրինակները:

Ծրարը և սույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

3.2 Սույն հրահանգի 3.1-ին կետում նշված ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են՝

- 1) «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲԸ և հայտի ներկայացման վայրը (հասցեն).
- 2) ընթացակարգի ծածկագիրը.
- 3) «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը.
- 4) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

3.3 Սույն հրահանգի 3.1 և 3.2 կետերի պահանջներին չհամապատասխանող հայտերը հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

ԴԻՄՈՒՄ*
ընթացակարգին մասնակցելու

_____ հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել
մասնակցի անվանումը

_____ -ի կողմից «ՄՎԻ-ԱՊՁԲ-20/01» ծածկագրով հայտարարված
«Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲԸ

ընթացակարգի _____ չափաբաժնին (չափաբաժնիներին) և հրավերի
չափաբաժնի (չափաբաժնիներին) համարը

պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

_____ -ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է
մասնակցի անվանումը

_____ ռեզիդենտ:
երկրի անվանումը

_____ -ի հարկ վճարողի հաշվառման համարն է՝ _____ :
մասնակցի անվանումը հարկի վճարողի հաշվառման համարը

_____ -ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ _____ :
մասնակցի անվանումը էլեկտրոնային փոստի հասցեն

_____ (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

_____ ստորագրությունը

Կ. Տ

**ըրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

Հ Ա Յ Տ Ա Բ Ա Բ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին

Սույնով _____-ն հայտարարում և հավաստում է, որ
մասնակցի անվանումը

բավարարում է «ՄՎԻ-ԱՊՁԲ- 20/01»* ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության
իրավունքի պահանջներին:

Միաժամանակ _____-ն
մասնակցի անվանումը

1) հայտնում և հավաստում է, որ «ՄՎԻ-ԱՊՁԲ-20/01»* ծածկագրով ընթացակարգին մասնակցելու
շրջանակում՝

ա. թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային
համաձայնություն,

բ. բացակայում է մրցույթի հրավերով սահմանված՝ _____-ին
մասնակցի անվանումը

փոխկապակցված անձանց և (կամ) _____-ի
մասնակցի անվանումը

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս _____-ին
մասնակցի անվանումը

պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք,

մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրություն

Կ. Տ.

* լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:

** Սույն ենթակետում նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում է մասնակցի գործադիր մարմնի ղեկավարի և անդամների
տվյալները:

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին

Սույնով _____-ն հայտարարում և հավաստում է, որ
մասնակցի անվանումը

բավարարում է «ՄՎԻ-ԱՊՁԲ-20/01»* ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված որակավորման
չափանիշների պահանջներին:

մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրությունը

Կ. Տ.

* լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:

ՆԿԱՐԱԳԻՐ
մասնակից կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական

_____ -ն, ըստ «ՄՎԻ-ԱՊՁԲ-20/01»*

մասնակցի անվանումը

ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված չափաբաժինների, ստորև ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը.¹

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	ծագման երկիրը	տեխնիկական բնութագրերը

_____ (մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը))

_____ (ստորագրությունը)

Կ. Տ.

* լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:

¹ Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի և արտադրողի անվանման վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա սույն նախադասությունից հանվում են «ապրանքային նշանը, արտադրողի անվանումը,» բառերը, իսկ աղյուսակից՝ «ապրանքային նշանը» և «արտադրողի անվանումը» սյունակները:

Գ Ն Ա Յ Ի Ն Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

Ուսումնասիրելով «ՄՎԻ-ԱՊՁԲ-20/01»* ծածկագրով ընթացակարգի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____-ն առաջարկում է
մասնակցի անվանումը
պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

Չափա- բաժինների համարները	Սպրանքի անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>			
2	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>>			
3	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N3>>			
...	...			
...	...			

մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրությունը

Կ. Տ.

* լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:

**Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:

**«ՄԻՔՍՅԵԼՅԱՆ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ
ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՄՎԻ-ԱՊՁԲ-20/01**

ք. Երևան

«___» _____ 2020 թ.

«Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲ ընկերությանը ի դեմս տնօրեն՝ Է. Բարսեղյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և _____-ը, ի դեմս տնօրեն _____-ի, որը գործում է _____-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

2.1.8 Ձևնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է _____ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն²: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը: Ապրանքների համար վճարումները իրականացվելու են (180) հարյուր ութսուն օրվա ընթացքում մատակարարումից հետո:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

